ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՞ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանություն իրականացնող պաշտոնյաների խոցելիության ստուգման (վեթինգի) մասին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) փաթեթը և

խնդրում ենք

ներկայացված Նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագծերը (հիմնական զեկուցող՝ Արման Բաբաջանյան),
2. Նախագծերի ընդունման հիմնավորումը,
3. փոփոխվող օրենքների հոդվածների մասին տեղեկանքները:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Արման Բաբաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ես՝ պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյանս, ցանկանում եմ դառնալ համահեղինակ՝ Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանություն իրականացնող պաշտոնյաների խոցելիության ստուգման (վեթինգի) մասին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ փոփոխություններ կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պատգամավոր՝

Նիկոլայ Յու. Բաղդասարյան